ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/54067-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-337-01.11.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1801 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-337-01.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է լրացում կատարել օրենքի 125-րդ հոդվածում՝ խորհրդարանական լսումներ հրավիրելու լիազորություն ունեցող անձանց շարքում ներառելով նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներին: Բացի դրանից, առաջարկվում է նաև, որ խմբակցության կողմից յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում հրավիրվի ոչ թե մեկ, այլ երկու լսում:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հավասարակշռության ապահովման անհրաժեշտությամբ, քանզի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կառավարող ուժը՝ հանձինս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և երկու տեղակալի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի որոշման հիման վրա կարող է նախաձեռնել խորհրդարանական լսումներ, մինչդեռ ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից առաջադրված տեղակալը նման հնարավորությամբ օժտված չէ: Իսկ երկու լսում հրավիրելու անհրաժեշտությունը պայմանավորված է խմբակցությունների կողմից կազմակերպվող քաղաքացիների ընդունելությունների արդյունքում բացահայտվող հասարակական հնչեղություն և կարևորություն ունեցող բազմաթիվ խնդիրներով, որոնք հիմք են հանրային լայնամասշտաբ քննարկման և արդյունքում նաև օրենսդրական բարեփոխումների իրականացման համար:

Շարադրվածի համատեքստում անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ իրավական կարգավորումները: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ: Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալներն ընտրվում և հետ են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները:»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 125-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խորհրդարանական լսումներ կարող են հրավիրել՝

1) Ազգային ժողովի նախագահը.

2) մշտական հանձնաժողովները, առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով.

3) խմբակցությունը՝ իր կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցով:»:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալի լիազորությունները սահմանող «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումներին, որոնց համաձայն՝

«(…)

2. Ազգային ժողովի նախագահի հանձնարարությամբ Ազգային ժողովի նախագահի տեղակալը՝

1) նախագահում է Ազգային ժողովի նիստերը.

2) նախագահում է Խորհրդի նիստերը.

3) փոխարինում է Ազգային ժողովի նախագահին կամ իրականացնում է Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ հանձնարարություններ:

3. Ազգային ժողովի նախագահի տեղակալները մասնակցում են Խորհրդի նիստերին:

4. Ազգային ժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահի կողմից Հանրապետության նախագահի պարտականությունները կատարելիս Ազգային ժողովի նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահի այն տեղակալը, որը պաշտոնում ընտրվելիս ստացել է առավել շատ ձայներ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ տարիքով ավագը:»:

Նշված կարգավորումների և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալների դերի, լիազորությունների և նրանց վերապահված գործառույթների բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներն ըստ էության իրականացնում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի կազմակերպման, կանոնակարգման և առհասարակ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված գործառույթներ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հանձնարարությամբ, նախագահում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և խորհրդի նիստերը, մասնակցում խորհրդի նիստերին, փոխարինում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, իսկ մնացած, այսինքն՝ կարգավիճակից բխող գործունեությունը վերջիններս իրականացնում են իրենց պատգամավորական լիազորությունների շրջանակում:

Շարադրվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալին խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավասության վերապահումը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված Ազգային ժողովի նախագահի տեղակալի կարգավիճակից, ինչպես նաև վերջիններիս վերապահված գործառույթների և լիազորությունների շրջանակից:

Այս առումով հիմնավորված չէ նաև նախագծի հեղինակի կողմից վկայակոչված հավասարակշռության ապահովումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղակալի պաշտոնով պայմանավորելը:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից, իսկ խմբակցության կազմում ընդգրկված ցանկացած պատգամավորի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալի կողմից առաջադրված նախագծին վերաբերող հարցով խմբակցությունը կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծին կից ներկայացված հիմնավորումից պարզ է դառնում, որ նախագծի ընդունմամբ ակնկալվում է ապահովել քաղաքացիների լայն շրջանակին մտահոգող և հասարակական հնչեղություն ու կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալի կողմից խորհրդարանական լսումների իրականացման հնարավորությունը:

Շարադրվածի հիման վրա գտնում ենք, որ, եթե նախագիծն ուղղված է ընդդիմադիր խմբակցության կամ խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորի առաջադրած նախագծին վերաբերող հարցերի շրջանակից դուրս այլ հարցերով, այդ թվում՝ քաղաքացիների լայն շրջանակին մտահոգող և հասարակական հնչեղություն, կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ խորհրդարանական լսումներ իրականացնելու հնարավորության և դրանով իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հավասարակշռության ապահովմանը, ապա այս առումով կարելի է քննարկել խմբակցությունների կողմից խորհրդարանական լսումների իրականացման հարցերի շրջանակն ընդլայնելու հնարավորությունը:

Հակառակ պարագայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ նախագծի հեղինակի կողմից վկայակոչված հավասարակշռության ապահովումը կհանգեցնի մյուս ընդդիմադիր խմբակցությունների նկատմամբ անհավասարակշռության՝ ելնելով այն հանգամանքից, որ նախագծով նախատեսված կարգավորման պարագայում խորհրդարանական լսումներ իրականացնելու լիազորություն կվերապահվի միայն այն ընդդիմադիր խմբակցությանը, որի կազմում ընդգրկված պատգամավորների թվից առաջադրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տվյալ տեղակալը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ բարձրացված խնդիրների համատեքստում նախագիծն ունի լրացուցիչ հիմնավորման և լրամշակման կարիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2019 թվականի N 1801 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-337-01.11.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 3

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-337-01.11.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 125-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները.»:

Հոդված 2. Օրենքի 125-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Լսումները հրավիրվում են Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաեւ խմբակցության որոշմամբ»:

Հոդված 3. Օրենքի 125-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել երկու լսում»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային ժողովի կանոնակարգ»

ՀՀ սահմանադրական օրենքում լրացում կատարելու նախագծի վերաբերյալ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ սահմանադրական օրենքի 125 հոդվածը սահմանում է խորհրդարանական լսումներ հրավիրելու լիազորություն ունեցող անձանց ցանկը, համաձայն որի, ի թիվս այլ անձանց լսումներ կարող է իրականացնել նաեւ ՀՀ ԱԺ նախագահը:

ՀՀ սահմանադրության 104 հոդվածի եւ Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ԱԺ նախագահն ունի երեք տեղակալ: Ընդ որում տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Նման կարգավորման նպատակն է հնարավորինս հավասարակշռել ՀՀ ԱԺ ղեկավարության կազմը՝ սահմանելով, որ այդ կազմում պետք է լինի նաեւ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչ: Բնականաբար, հավասարակշռությունը պայմանավորված է նաեւ այս կամ այն պաշտոնատար անձի լիազորությունների ծավալով:

Ներկայումս գործող կարգավորման համաձայն ՀՀ ԱԺ ղեկավարության կազմի իշխանական ուժը, որը ներկայացված է ՀՀ ԱԺ նախագահով եւ երկու տեղակալներով, հնարավորություն ունի նախագահի միանձնյա որոշման հիման վրա նախաձեռնել լսումներ: Մինչդեռ նույն ՀՀ ԱԺ ղեկավարության կազմ հանդիսացող ընդդիմադիր ներկայացուցիչը նման հնարավորություն չունի: Հետեւաբար, որպեսզի ընդդիմադիր ներկայացուցչի պարտադիր ներգրավումը ՀՀ ԱԺ հավասարակշռություն հաղորդելու իրական հնարավորություն ունենա, անհրաժեշտ է առնվազն վերջինիս օժտել նման լիազորությամբ: Միեւնույն ժամանակ, որպեսզի անհավասարություն չլինի տարբեր տեղակալների լիազորությունների ծավալում, ապա բնականաբար անհրաժեշտ է որպեսզի այդ լիազորությամբ օժտված լինեն բոլոր տեղակալները:

«Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ սահմանադրական օրենքի 125 հոդվածի 3-րդ մասի գործող կարգավորման համաձայն խմբակցությունը յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում կարող է հրավիրել միայն մեկ լսում: Ակնհայտ է, որ խմբակցությանը վերապահված խորհրդարանական ընդամենը մեկ լսում հրավիրելու օրենսդրական հնարավորությունը բավարար չէ: Խմբակցության պատգամավորներից յուրաքանչյուրը մշտապես կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, ինչի արդյունքում վերջիններիս կողմից ներկայացվում եւ բացահայտվում են բազմաթիվ հասարակական հնչեղություն եւ կարեւորություն ունեցող խնդիրներ, որոնք հաճախ հիմք են հանդիսանում հանրային լայնամասշտաբ քննարկման, արդյունքում նաեւ օրենսդրական բարեփոխումների իրականացման համար: Բացի այդ, բազմիցս խոսվել է այն մասին, որ ներկայիս պայմաններում շատ հարցեր պետք է լուծվեն ուղղակի ժողովրդավարության միջոցով, քաղաքացիների անմիջական ու ակտիվ մասնակցությամբ եւ ներգրավմամբ, ուստի որեւէ որոշում կայացնելուց առաջ այդ քաղաքացիներին առնվազն պետք է հնարավորություն տրվի արտահայտվելու եւ լսելի լինելու: Ուստի այս պայմաններում առավել քան ակնհայտ է, որ խմբակցության կողմից հերթական նստաշրջանի ընթացքում ընդամենը մեկ լսում հրավիրելու սահմանափակումն ակնհայտ աննպատակահարմար է: Ուստի եւ առաջարկում եմ խմբակցության համար սահմանել յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում խորհրդարանական երկու լսում իրականացնելու հնարավորությունը:

Իրավական ակտի ընդունման արդյունքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում առավելագույնս կապահովվի քաղաքացիների լայն շրջանակներին մտահոգող եւ հասարակական հնչեղություն ու կարեւորություն ունեցող հարցերի վերաբերյալ խորհրդարանական լսումներ իրականացնելու ավելի լայն հնարավորությունը: